ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.11.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/186

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ.Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ դատական դեպարտամենտ
Մասնակից՝ «Դերձակ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ պատական դեպարտամենտի ներկայացուցիչներ՝ Ա. Եղիազարյանի, Ա. Հարությունյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/07» ծածկագրով գնանշման հարցում, արտադրական հատուկ հագուստի (հանդերձանքի) ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/07»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների

նախարարության կողմից 09.10.2019թ.-ի թիվ 26/26-1/16454-2019 գրությամբ «Դերձակ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 30.09.2019թ. թիվ ԴԴ-3-Ե-8795 գրության հիման վրա, 09.10.2019թ.-ին «Դերձակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի (Գ. Ներսիսյանի) 09.10.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ՍՑ-ՆԳ-2019/168 համարի ծածկագիրը: 14.10.2019թ.-ին և 24.10.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 24.10.2019թ.-ի թիվ 580-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2019-2020թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, թիվ ՍՑ-ՆԳ-2019/168 համարի ծածկագրով ընթացակարգի քննությունը 04.11.2019թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

04.11.2019թ.-ին կայացված որոշմամբ գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2019/186 համարի ծածկագիրը և 06.11.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 06.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 08.11.2019թ.-ին:

2. <u>ՀՀ դատական դեպարտամենտի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ դատական դեպարտամենտը 30.09.2019թ. թիվ ԴԴ-3-Ե-8795 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով, ներկայացրել է Դատական դեպարտամենտի կարիքների համար արտադրական հատուկ հագուստի (հանդերձանքի) ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/07» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում «Դերձակ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, օրենքով սահմանված կարգով հետագա ընթացքը լուծելու համար:

3. <u>«Դերձակ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 04.11.2019թ.-ին գրությամբ դիմել է «Դերձակ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.10.2019թ.-ի թիվ 26/26-1/16454-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև հրավիրված նիստին:

4. <u>ՍՑ-LO-2019/186 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ դատական դեպարտամենտի և «Դերձակ» ՍՊԸ-ի միջև 19.04.2019թ.-ին կնքվել է թիվ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/07» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով (այսուհետ՝ Հավելված 1) սահմանվել է ապրանքների մատակարարման ժամկետները, ծավալները և հասցեն:

Հավելված 1-ով մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրի 8.1 կետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Կողմերի միջև 23.07.2019թ.-ին կնքվել է 19.04.2019թ.-ին թիվ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/07» ծածկագրով պետական գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին թիվ 2 համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

Համաձայնագրի 1 կետի համաձայն՝ Կողմերը որոշել են հատկացված ֆինանսական միջոցների շրջանակում մատակարարման ենթակա թվով 679 հատ արտադրական հատուկ հագուստի (հանդերձանքի) մասով Պայմանագրի թիվ 1 հավելված հանդիսացող տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում ապրանքի մատակարարման ժամկետը սյունյակում նշված «Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 60 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 90 օրացուցային օրվա ընթացքում» բառերով:

Համաձայնագրի 2.1 կետի համաձայն՝ համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

www.gnumner.am համացանցային կայքում 30.09.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Պատվիրատուն հիմք ընդունելով Դատական դեպարտամենտի և «Դերձակ» ՍՊԸ միջև կնքված թիվ ԴԴ-ԴՀԱՊՁԲ-19/07 պայմանագրով ամրագրված պայմանները, ինչպես նաև հաշվի առնելով, որ Ընկերության կողմից խախտվել են Պայմանագրի 2.4.1-րդ, 2.4.2-րդ, 2.4.5-րդ, 2.4.6-րդ, 2,4.9-րդ կետերով սահմանված պարտավորությունները և Ընկերությունը Դատական դեպարտամենտին Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո Դատական դեպարտամենտի կողմից լրացուցիչ տրամադրված ժամկետում չի մատակարարել Պայմանագրով որոշված քանակի ապրանքը, և ղեկավարվելով Պայմանագրի 2.1.1-րդ կետի, 2.1.3-րդ կետի «բ» ենթակետի. 2.1.7-րդ կետի, 2.1.7-րդ կետի «բ» ենթակետի պահանջներով տեղեկացվում է, որ Դատական դեպարտամենտը՝ հրաժարվում է Ընկերության կողմից մատակարարված ապրանքից (197 լրակազմից) և դրա համար վճարելուց, միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը, ձեռնարկում է Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից բխող միջոցներ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.10.2019թ.-ի թիվ 26/26-1/16454-2019 գրությամբ «Դերձակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն' պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.1 կետ համաձայն՝ Գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ դատական դեպարտամենտի և «Դերձակ» ՍՊԸ-ի միջև 19.04.2019թ.-ին կնքված թիվ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/07» ծածկագրով պետական գնման Պայմանագրի հավելված 1-ով

տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է ապրանքների մատակարարման ժամկետները, ծավալները և հասցեն:

Հավելված 1-ով մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 60 օրացուցային օրվա ընթացքում: Իսկ Պայմանագրի 8.1 կետի հիմքով՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից՝ 19.04.2019թ.-ին:

Կողմերի միջև 23.07.2019թ.-ին կնքված՝ 19.04.2019թ.-ին թիվ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/07» ծածկագրով պետական գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին թիվ 2 համաձայնագիրը 1 կետի համաձայն՝ Պայմանագրի թիվ 1 հավելված հանդիսացող տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում ապրանքի մատակարարման ժամկետը սյունյակում նշված «Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 60 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինվել են «Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 90 օրացուցային օրվա ընթացքում» բառերով:

www.gnumner.am համացանցային կայքում 30.09.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Պատվիրատուն հիմք ընդունելով Դատական դեպարտամենտի և «Դերձակ» ՍՊԸ միջև կնքված թիվ ԴԴ-ԴՀԱՊՁԲ-19/07 պայմանագրով ամրագրված պայմանները, ինչպես նաև հաշվի առնելով, որ Ընկերության կողմից խախտվել են Պայմանագրի 2.4.1-րդ, 2.4.2-րդ, 2.4.5-րդ, 2.4.6-րդ, 2,4.9-րդ կետերով սահմանված պարտավորությունները և Ընկերությունը Դատական դեպարտամենտին Պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո Դատական դեպարտամենտի կողմից լրացուցիչ տրամադրված ժամկետում չի մատակարարել Պայմանագրով որոշված քանակի ապրանքը, և ղեկավարվելով Պայմանագրի 2.1.1-րդ կետի, 2.1.3-րդ կետի «բ» ենթակետի. 2.1.7-րդ կետի, 2.1.7-րդ կետի «բ» ենթակետի պահանջներով տեղեկացվում է, որ Դատական դեպարտամենտը՝ հրաժարվում է Ընկերության կողմից մատակարարված ապրանքից (197 լրակազմից) և դրա համար վճարելուց, միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը, ձեռնարկում է Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից բխող միջոցներ:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Դերձակ» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանիորեն 26.09.2019թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am

համացանցային կայքում 30.09.2019թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի թիվ 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն' պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում' նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված' ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Դերձակ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, այն է՝ Պայմանագրով սահմանված ժամկետում չի մատակարարել նախատեսված ապրանքները, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.10.2019թ.-ի թիվ 26/26-1/16454-2019 գրությամբ «Դերձակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/186 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Դերձակ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**